# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ-ն ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/71 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | "Safemate EZ Class ii microbiological safety cabinet" | Tecnilabo | SafeMate EZ 1.2 | Tecniplast | 1.Պահարանը պատկանում է II դասին, A2 տիպին: 2.Աշխատանքային խցիկի լայնությունը՝ 1230 մմ: 3.Աշխատանքային խցիկի բարձրությունը 700 մմ և ապահովում է ինվերտացված միկրոսկոպի տեղադրման և շահագործման հնարավորություն: 4.Պահարանի կառուցվածքը ապահովում է օպերատորի, նմուշի և շրջակա միջավայրի պաշտպանությունը՝ II դասի A2 տիպի պահարանի նշանակությանը համապատասխան կենսաբանական |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | նյութերի հետ աշխատանքի ընթացքում։ 5.Պահարանը ունի միկրոպրոցեսորային կառավարման համակարգ՝ ցուցադրման վահանակով/էկրանով։ 6. Ապահովում է օդային հոսքերի պարամետրերի իրական ժամանակի մոնիթորինգ, ինչպես նաև տեսողական և ձայնային ազդանշանային համակարգ՝ աշխատանքային պարամետրերի թույլատրելի սահմաններից շեղման դեպքում։ 7.Առջևի պատուհանը (sash) ապահովում է անվտանգ ֆիքսացիա աշխատանքային դիրքում, պաշտպանիչ փակման հնարավորություն և մաքրման ու սպասարկման համար հասանելիություն։ 8.Առջևի պատուհանը՝ էլեկտրաշարժիչով կառավարմամբ։ 9.Պահարանը համապատասխանում է EN 12469:2000 ստանդարտին։ 10.Աշխատանքային գոտու օդի մաքրությունը՝ ISO Class 3՝ ըստ EN ISO 14644-1։ 11.Ֆիլտրացիոն համակարգը ներառում է H14 դասի ֆիլտրեր՝ ըստ EN 1822-1, 99.995% արդյունավետությամբ MPPS-ի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | դեպքում: 12.Մուտքային օդի միջին արագությունը 0.40 մ/վ: 13.Նվազող լամինար օդային հոսքի միջին արագությունը համապատասխանում է արտադրողի կողմից II դասի A2 տիպի պահարանի համար հայտարարված նոմինալ արժեքներին և հաստատվում է գործարանային փորձարկումներով/սերտիֆիկացմամբ: 14.Պահարանի աերոդինամիկական սխեման համապատասխանում է A2 տիպի կառուցվածքին, այսինքն` ապահովվում է մոտավորապես 30% արտածվող և 70% ռեցիրկուլացվող օդ: 15.Պահարանը նախատեսված է շահագործման համար առանց արտաքին արտածման օդափոխության համակարգին պարտադիր միացման: Thimble/canopy համակարգով միացման հնարավորությունը առկա է որպես լրացուցիչ օպցիա: 16.Աշխատանքային խցիկը, աշխատանքային մակերեսը և աշխատանքային գոտու հետ շփվող ներքին տարրերը պատրաստված են 304 տեսակի չժանգոտվող |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | պողպատից: 17.Աշխատանքային մակերեսի լուսավորվածությունը 750 յուքս: 18.Աշխատանքային գոտու ներսում նախատեսված է երկու ներկառուցված օժանդակ էլեկտրական վարդակ: 19.Էլեկտրասնուցումը՝ 220–240 Վ, 50/60 Հց: 20.Մատակարարման փաթեթում ներառված է բարձրությամբ կարգավորվող ստենդ: 21.Պահարանը ապահովում է մաքրման, ախտահանման և տեխնիկական սպասարկման հարմարավետություն: 22.Ուլտրամանուշակագույն լամպը ներառված է սարքի մեջ: Այն ունի անվտանգ միջբլոկավորում, որը բացառում է աշխատանքի հնարավորությունը բաց առջևի պատուհանի դեպքում կամ օպերատորի աշխատանքային ռեժիմում: 23.Արտադրողը ունի ներդրված ISO 9001 որակի կառավարման համակարգ: 24.Առաջարկի մեջ ներառված են սարքավորման առաքումը, տեղադրումը, շահագործման հանձնումը, աշխատունակության ստուգումը/թեստավորումը: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 25.Առաջարկի մեջ ներառված է անձնակազմի ուսուցումը սարքավորման հետ աշխատանքի վերաբերյալ։ 26.Երաշխիքային ժամկետը` 12 ամիս։ Ապահովված է հետերաշխիքային սպասարկման հնարավորություն։ |

## ПОЛНОЕ ОПИСАНИЕ
**предлагаемого товара**

Концерн-Энергомаш ЗАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/71 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 1 | | | | | |